

ՀՏԴ 372.3

ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**ԻՆՉՈ՞Ւ ԶԻ ԽՈՍՈՒՄ ԵՐԵՄԱՆ. ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՊԱՂՈՒՄԸ
ՈՐՊԵՍ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ**

Չարչյան Ա. Ռ., Բաջախյան Մ. Պ.

Խոսքի զարգացման հապաղում (ԽՉՀ) ունեցող երեխաների խոսքի խանգարումը կրում է բազմակողմանի բնույթ, խնդրի հաղթահարումը պահանջում է մշակել թիմային աշխատանք, մեթոդական, կազմակերպչական, շտկողական աշխատանքներ, որոնց լուծման համար մշակվել են հատուկ մեթոդներ և տեխնոլոգիաներ: Այդ մեթոդներից մեկը համալիր մեթոդն է, որն իր մեջ ներառում է մի շարք համակարգերի համատեղում: Խոսքի զարգացման համար բարենպաստ ժամանակը վաղ տարիքն է՝ 0-3 տարեկանը: Խոսքի միջոցով են զարգանում հոգեկան մյուս գործընթացները՝ ընկալումը, մտածողությունը, հիշողությունը, հույզերը, ցանկությունները և, հակառակը, հոգեկան գործընթացների շնորհիվ զարգանում է խոսքը, այսինքն՝ հոգեկան գործընթացները խոսքի զարգացման համար միջնորդավորող դեր ունեն:

Բանալի բառեր. խոսքի զարգացման հապաղում, տարիքային առանձնահատկություններ, խոսքային ախտանիշներ, հարցաթերթիկային հարցում:

Անձի զարգացումը առանց սոցիալական շփման հնարավոր չէ: Միայն սոցիալական փոխազդեցության և գործնական գործունեության միջոցով են զարգանում երեխայի խոսքն ու հոգեկան գործընթացները [4]: Խոսքն օգնում է այնպիսի հոգեկան գործընթացների զարգացմանը, ինչպիսիք են գիտակցությունը, երևակայությունը, գործողությունների պլանավորումը, տրամաբանական և փոխաբերական մտածողությունը և, իհարկե, հաղորդակցումը: Խոսքը մարդու կարևորագույն հոգեկան գործընթացներից մեկն է (Յ. Ս. Բելյանին 2003):

Թեմայի արդիականությունը: Հայտնի է, որ երեխայի անձի ձևավորման համակարգում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում

խոսքի զարգացումը, որը սերտորեն կապված է մարդու մտավոր և ընդհանուր զարգացման հետ: Հնչյունահնչության, բառաքերականական, նուրբ շարժունակության գործառույթների խանգարումները լուրջ խոչընդոտ են հանդիսանում նախադպրոցական տարիքում երեխայի խոսքի զարգացման համար: Խոսքի զարգացման մակարդակը ավագ նախադպրոցական տարիքում կարևորագույն ցուցանիշ է դպրոց հաճախելու համար: Խոսքի խանգարումները անհանգստացնում են ոչ միայն մասնագետներին (լոգոպեդ, հոգեբան, դաստիարակ), այլ նաև երեխային շրջապատող մարդկանց:

Մեր ուսումնասիրության նպատակն է ուսումնասիրել և վեր հանել խոսքի զարգացման հապաղում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների հետ տարվող լոգոպեդական աշխատանքի առավել արդյունավետ ձևերը, հնարները և մեթոդները:

Թեմայի հետ առնչվող խնդիրները

- ✓ Վերլուծել և ուսումնասիրել մասնագիտական գրականության տվյալները,
- ✓ ներկայացնել խոսքի զարգացման հապաղման շտկման առանձնահատկություններ լոգոպեդական աշխատանքում,
- ✓ բացահայտել երեխաների խոսքի զարգացմանը նպաստող օրինաչափությունները:

Մեր ուսումնասիրությունների համար կիրառել ենք զրույցի, հարցազրույցի, դիտման, հացաթերթիկային հարցման մեթոդները:

Խոսքը բարդ ֆունկցիոնալ համակարգ է: Մարդը ծնվում է առանց խոսքային պաշարի: Ծնողների և հարազատների հաղորդակցման հիմնական ձևը երեխայի հետ նրա կյանքի առաջին ամիսներին հուզական դրսևորումներն են: Յուրաքանչյուր ժամանակաշրջան ունի իր դերը խոսքի զարգացման մեջ, և առանց դրանց խոսքի զարգացումը կարող է խաթարվել: Կյանքի առաջին ամիսներին երեխան հնչյուններն արտաբերում է «անգիտակցաբար»՝ աստիճանաբար պատրաստելով իր արտաբերական ապարատը խոսքին [3]:

9-10 ամսականից մինչև 1-1.2 տարեկան հասակում ի հայտ են գալիս առաջին բառերը, որոնք կարող են լինել ն՝ ճիշտ, ն՝ թերություններով՝ պահպանելով ընդհանուր վանկային կառուցվածքը, ռիթմը: Երեխան կարողանում է պարզեցնելով արտաբերել բառեր:

Երեխայի արտասանած բառը այս փուլում վերաբերում է ամբողջ իրավիճակին. նույն բառով նա կարող է նշել առարկան, գործողությունը, իր վերաբերմունքը, զգացողությունը: Այսինքն՝ սկզբնական շրջանում

բառը բազմիմաստ է, բացի այդ, այն նաև ողջ միտք է արտահայտում (բառ-նախադասություն): Այս շրջանը համընկնում է հոգեշարժողական զարգացման նոր փուլի հետ, երբ երեխան սկսում է քայլել: Չարգանում է ձեռքերի ակտիվ մանիպուլյացիոն գործունեությունը, դաստակով բռնելուն սկսում են մասնակցել բութ մատը և մյուս մատների առջևի ֆալանգները: Կան որոշ տարբերություններ տղաների և աղջիկների միջև. աղջիկների 1-ին բառերն ի հայտ են գալիս մոտ 8-9 ամսական հասակում, տղաների մոտ՝ 11-12 ամսականում [1]:

Խոսքի զարգացման հապաղման առաջացման պատճառների հիմքում սոցիալական գործոնն է, որը ներառում է երեխայի միկրո – սոցիալական միջավայրը, այսինքն՝ ընտանիքը, որտեղ չի խթանվում երեխայի խոսքի զարգացումը, չի ապահովվում երեխայի ակտիվ խոսքային միջավայրը, երեխայի հուզական շփումը, առկա է ծնողական և մանկավարժական բարձիթողի վիճակ, երեխայի բարդ քերականական կառույցներ ունեցող նախադասություններով հաղորդակցվելը և այլն:

Այս երեխաների ուշադրությունն անկայուն է: Խաղային գործողությունը նպատակային չէ: Այսպիսի խնդրով երեխանները հիմնականում ունենում են վատ զարգացած ձեռքի շարժումներ, ինչպիսիք են՝ բռնելը, պոկելը, քաշելը (Т. А. Датешидзе 2004):

Երբեմն բառի փոխարեն երեխան կարող է մեկ վանկը արտաբերել, կամ բառի պատառիկներ: Հիմնականում նրանց խոսքը արտահայտիչ չէ: Երեխաների խոսքը երբեմն կարող է հասկանալի չլինել դիմացինի համար: Եթե առհասարակ առկա է խոսքի բացակայություն, միևնույն է, երեխայի պասիվ բառապաշարում առկա է որոշակի բառային ֆոնդ, որը նա կուտակել է իր խոսքային փորձի հետևանքով:


ԽՁՀ-ի յուրահատկությունն այն է, որ երբ երեխան բառն արտաբերում է ոչ ճիշտ հնչյունային կառուցվածքով, դա հենց այդպես էլ ամրապնդվում է: Հետագայում շտկողական աշխատանքում առկա են լինում դժվարություններ: Կարևորելով խոսքի զարգացման օնտոգենեզը հատկապես ԽՁՀ ունեցող երեխաների մոտ՝ մենք անցկացրել ենք սոցիարցում՝ վեր հանելու և հասկանալու համար, թե որքանով են ծնողները տեղեկացված խոսքի զարգացման առանձնահատկություններից և ինչպիսի պատճառներից են հիմնականում դրանք առաջանում:

Հարցմանը մասնակցել է խոսքի զարգացման հապաղում ունեցող երեխաների 16 ծնող և ԽՁՀ ունեցող երեխաների հետ աշխատող 20 լոգոպեդ:

Հարցմանը մասնակցող ծնողների 68.8%-ը տեղյակ է խոսքի զարգացման առանձնահատկություններից, իսկ 31.3%-ը՝ ոչ:


Հարցմանը մասնակցած ծնողների երեխաների տարիքը տատանվում էր 3-5 տարեկանի շրջանում: Նրանց 50%-ը հաճախում է մանկապարտեզ, 38%-ը՝ զարգացման կենտրոն, 6%-ը այլ խմբակներ, իսկ մյուս 6%-ը ոչ մի հաստատություն չի հաճախում: Ծնողների 70%-ը նշում է, որ ժամանակի պատճառով շատ քիչ են զբաղվում իրենց երեխաների հետ, իսկ մյուս 30%-ը՝ 2-3 ժամ օրվա կտրվածքով:

Ստորև բերված տրամագրում նշված է, որ երեխաների 50%-ը օրվա մեծ մասը անցկացնում է հեռախոսի, հեռուստացույցի և նմանատիպ տեխնիկաների առջև, 40%-ը՝ 4-5 ժամ է անցկացնում, իսկ մյուս 10%-ը նշում է, որ չեն զբաղվում նշված տեխնիկաներով (տրամագիր 1):



Տրամագիր 1. Օրվա ընթացքում երեխայի զբաղվածությունը տեխնիկական միջոցներով տոկոսային հարաբերությամբ:

Երեխաների 75%-ը չի հաղորդակցվում իր հասակակիցների հետ կամ դժվարանում է, իսկ 25% դեպքերում հաղորդակցվում է:



Տրամագիր 2. Երեխաների հաղորդակցման առանձնահատկությունները տոկոսային հարաբերությամբ:

Արդյունքները վերլուծելիս կարելի է ասել, որ երեխաները իրենց առաջին բառերը ասել են 3 տարեկանից հետո: Ծնողների 75%-ը դիմել են լոգոպեդին և հոգեբանին՝ հասկանալու համար, թե ինչու է ուշանում իրենց երեխայի խոսքը, իսկ մյուս 25%-ը չի դիմել որևէ մասնագետի: Ծնողները նշում են, որ անհանգստացնող հիմանական ախտանիշը երեխայի խոսքի բացակայությունն է:

Լոգոպեդների 78.9%-ը խոսքի զարգացման հապաղման՝ զուգակցված այլ խանգարումների հետ, չի հանդիպել, իսկ 21.1%-ը հանդիպել էր: 90% պարագայում այս խնդիրը հանդիպում է տղաների մոտ և հազվադեպ՝ աղջիկների մոտ: Այս խնդրի պարագայում մասնագետները կողմ են թիմային աշխատանքին և համարում են, որ պետք է համագործակցել հոգեբանի հետ ևս:

Թիմային աշխատանքը կարևորելով՝ պետք է նշենք նաև, որ հարցվածների 95%-ը նշում է ծնողի կարևոր դերը խնդրի հաղթահարման գործում:

ПОЧЕМУ РЕБЕНОК НЕ ГОВОРИТ? РАЗВИТИЕ РЕЧИ КАК ПРОБЛЕМА

Чарчян А. Р., Баджахан М. А.

Развитие речи ребенка в первые годы жизни важно для остальной жизни, поэтому развитие речи должно начинаться с первых дней жизни ребенка. Когда мы имеем то или иное речевое расстройство, проблема не только в том или ином компоненте речи. У нас также есть проблемы с другими высшими психическими проблемами ребенка. Задержка в развитии речи вызывает задержку общих высших психических процессов. Поэтому для решения проблемы необходимо раннее вмешательство и комплексная работа.

Ключевые слова: задержка развития речи, возрастные особенности, речевые симптомы, анкетный опрос.

WHY DOESN'T THE CHILD SPEAK? SPEECH IMPEDIMENT AS AN ISSUE

Charchyan A. R., Bajakhyan M. P.

The development of a child's speech in the first years of life is important for the rest of life, so speech development should start from the first days of a child's life. When we have this or that speech disorder, the problem is not only with this or that component of speech. We also have problems with other

higher mental issues of the child. The delay in the development of speech causes a delay in general higher mental processes. Therefore, early intervention and teamwork are needed to resolve the problem.

Keywords: delay in speech development, age characteristics, speech symptoms, questionnaire survey.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Максаков А. И. Правильно ли говорит ваш ребенок. М.: Просвещение. 1988. 159 с.
2. Датешидзе Т. А. Система коррекционной работы с детьми раннего возраста с задержкой речевого развития. СПб.: Речь. 2004. С. 6-8, 128 с.
3. Белянин В. П. Психолингвистика: Учебник / Белянин Валерий Павлович; Гл.ред. Д. И. Фельдштейн. М.: Флинта: Московский психолого-социальный институт. Пятое издание.-Москва: Флинта: МПСИ. 2008. 226 с.
4. <http://www.mumbaby.ru/>
5. http://elar.uspu.ru/bitstream/uspu/4758/1/07Kostrova2.pdf?fbclid=IwAR2dPzal7C3iLEukNjzS8KStYPFi4Iii qCJ_OhSXRIP-6JWzHcAuIIhIUAE
6. <http://karkusha.su/zaderzhka-rechevogo-razvitiya-u-detey-2-3-let/>
7. <https://www.krasotaimedicina.ru/diseases/speech-disorder/speech-retardation>

Տեղեկություններ հեղինակների մասին

Չարչյան Ա. Ռ.-մանկավարժական գիտությունների թեկնածու
Հայկական պետական մանկավարժական համալսարան
Էլ. փոստ՝ charchyananna@gmail.com

Բաջախյան Մ. Պ.- ուսանող

Հայկական պետական մանկավարժական համալսարան
Էլ. փոստ՝ bajakhyanmariam-9@aspu.am

Տրվել է խմբագրություն 14.10.2019